ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-1-2-Ա

ք. Երևան 12.03.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց 2025 թվականի մայիսի 16-ին ներկայացուցիչ Անուշ Մուրադյանի կողմից ներկայացված անհատ ձեռնարկատեր «Մարիյա Ազատյան Սերգեյի» ընկերության (ՀՀ, Երևան, Դավթաշեն թղմ. 4, շ. 46/10 3, AM) «FROM HENKO» (No20241807) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 111-րդ մասի 14-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշն ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող «HENKO» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://henkobr.com/ ինտերնետային կայքում և, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդին ներկայացրեց բողոքի բովանդակությունը:

Բողոքարկողի ներկայացուցիչը կարծում էր, որ հայտարկված ապրանքային նշանը գրանցման ենթակա է, քանի որ հակադրված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման չէ հայտարված ապրանքային նշանին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության ժամանակ կայքը հասանելի է եղել, որի արդյունքում կայացվել է իրավաչափ որոշում:

Բողոքարկման խորհրդի որոշում կայացնելու քննարկման ժամանակ հաշվի առնելով, որ կրկնական փորձաքննության որոշումը կայացնելուց կայքը գործել է, իսկ ավելի ուշ այն չի գործում առաջարկվեց որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակել՝ իրավաչափ որոշում կայացնելու համար:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Անուշ Մուրադյանի կողմից ներկայացված անհատ ձեռնարկատեր «Մարիյա Ազատյան Սերգեյի» «FROM HENKO» (No20241807) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ